


ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ
ՊԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԲՅՈՒՐՈ

ԼԵԿՏՈՐԻՈՒՄՆԵՐԻ
ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ
ԶԵՎԵՐՆ ՈՒ
ՄԵԹՈԴՆԵՐԸ



ԵՐԵՎԱՆ



ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ ՍՈՎԵՏԻՆ ԿԻՑ ԿՈՒԼՏՈՒՐ-ԼՈՒՍԱՎՈՐԱԿԱՆ
ՀԻՄՆԱՐԿՆԵՐԻ ԳՈՐԾԵՐԻ ԿՈՄԻՏԵ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԲՅՈՒՐՈ

374.5

Լ-31

ՍՏՈՒԳՎԱԾ Է 1981 թ.

ԼԵԿՏՈՐԻՈՒՄՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՁԵՎԵՐՆ ՈՒ ՄԵԹՈԴՆԵՐԸ



A $\frac{\pi}{12460}$

**ФОРМЫ И МЕТОДЫ
РАБОТ ЛЕКТОРИЙ**

(На армянском языке)
Ереван, 1949

Ն Ե Ր Ա Շ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Մեր երկրում սոցիալիզմի հաղթանակը, էկոնոմիկայի, կուլտուրայի, դիտության ու տեխնիկայի զարգացման բնագավառում ամբողջապես փոխել է մեր բանվորների, կոլխոզնիկների ու սովետական ինտելիգենցիայի կուլտուր-կենցաղային և նյութական դրությունը: Սովետական քաղաքացին կոմունիզմի ակտիվ կառուցող է, օժտված է բարձր գիտակցությամբ: Նա մի քանի դլխով բարձր է կանգնած կապիտալիզմի շղթաներով կաշկանդված ամեն մի բարձրատիճան չինովնիկից: Նա գիտե իր այսօրվա, վաղվա և ապագա առելիքները:

ՍՍՌՄ-ում բոլոր ժողովուրդները միասին պայքարում են հայրենիքի բարօրության, աշխատավորության երջանկության համար, կոմունիզմի հաղթանակի համար:

Սոցիալիզմի հաղթանակը և սոցիալիզմից աստիճանաբար կոմունիզմին անցնելը պահանջում է անձնուրաց աշխատանքի նոր թափ, նոր վերելք և ավելի բարձր կազմակերպվածություն ու գիտակցություն: Ուստի մասսաների կոմունիստական դաստիարակությունը մեր երկրի զարգացման ներկա էտապում մեր առաջ ծառացած կարևորագույն և հրատապ խնդիրներից մեկն է հանդիսանում: Կոմունիստական դաստիարակության կարևոր տարրերից մեկը կապիտալիզմի մնացուկների հաղթահարումն է մարդկանց գիտակցության մեջ: Սովետական դիտության նվաճումների, բնագիտության, հակակրոնական պրոպագանդայի ծավալումը, մատերիալիստական աշխարհայացքով ժողովրդին զինելը բոլշևիկների պարտիայի և սովետական կառավարության այսօրվա պահանջն է: Իդեոլոգիական աշխատանքի բարելավման միջոցառումների մասին ՀամԿ(բ)Պ Կենտրոնական Կոմիտեի

կայացրած պատմական որոշումները նոր խթան հանդիսացան գիտալուսավորական պրոպագանդան լայնորեն ծավալելու, կարգացվող դասախոսությունների դադափարական բովանդակությունը, գիտական նշանակությունը բարձրացնելու, ինչպես և բազմազան ձևեր ու մեթոդներ կիրառելու համար:

Գիտալուսավորական պրոպագանդան ծավալելու լավագույն ձևերից մեկն էլ լեկտորիումներն են: Առաջավոր ուսպուրիկայների, հատկապես ՌՍՖՍՌ-ի փորձի հիման վրա, մենք էլ անցյալ տարվանից կազմակերպել ենք մի շարք լեկտորիումներ, որտեղ կարգացվում են ցիկլային և էպիզոդիկ դասախոսություններ: Մեր ուսպուրիկայում լեկտորիումները կարճ պատմություն ունեն, ուստի մենք դեռ հարուստ փորձ չունենք լեկտորիումներում գիտաբնագիտական պրոպագանդա կազմակերպելու բնագավառում: Եվ այս դրածն առաջին փորձն է մեր ուսպուրիկայում այդ ուղղությամբ կատարված աշխատանքն ամփոփելու, հետադայում լեկտորիումների ցանցն ընդարձակելու, նրանց աշխատանքի ձևերն ու մեթոդները շարադրելու բնագավառում: Այս աշխատանքն օգնելու է կուլտուրալուսավորական բաժինների, կուլտուրայի շրջանային տների, ակումբների, գրադարանների վարիչներին, դասախոսական խմբակների անդամներին՝ լեկտորիումներում աշխատանքը լավ կազմակերպելու: Սակայն մենք հեռու ենք այն մտքից, թե այս մեթոդական նամակն սպառիչ կերպով ընդգրկում է լեկտորիումների աշխատանքի բազմազան ձևերն ու մեթոդները: Ընդհակառակը, խորապես համոզված ենք, որ առանց տեղերի օգնության անհնարին է ամփոփել, ամբողջական դարձնել լեկտորիումների աշխատանքը, առաջավորների փորձի փոխանակումը:

Կենտրոնական դասախոսական բյուրոն, հրատարակելով այս հրահանգչական, մեթոդական նամակը, կուլտուրալուսավորական ցանցի աշխատողներին խնդրում է նամակի վերաբերյալ իրենց գիտողություններն ուղարկել Երևան, Ամիրջան № 28, Կենտրոնական դասախոսական բյուրո:

ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԲՅՈՒՐՈ

ՄՇՏԱԿԱՆ ԼԵԿՏՈՐԻՈՒՄՆԵՐ

Կենտրոնական դասախոսական բյուրոն 1948 թ. կեսերին Երևան քաղաքում և որոշ շրջաններում կազմակերպել է մշտական լեկտորիումներ, որտեղ դասախոսություններ են կարդացել մայրաքաղաքի և ուսպուրիկայի անվանի գիտնականներ՝ Հայկ. ՍՍՌ Գիտ. ակադ. իսկական անդամներ, ինստիտուտների դասախոսներ, գիտության դոկտոր-պրոֆեսորներ, գիտության թեկնածուներ և այլ որակյալ ուժեր:

Երևան քաղաքի 26 կոմունարների անվան այգում, քաղաքային դրադարանում, Կիրգա ամանում, Աշտարակի շրջանի Օշական, Ախտալի շրջանի Փանտան, Դիլիջանի շրջանի Կույրիշևո դյուղերում, Հոկտեմբերյանի շրջանի № 3 սովխոզում, և այլ տեղերում կազմակերպված լեկտորիումները գործում են մեծ հաջողությամբ: Կազմակերպված լեկտորիումները այս տեսակետից ավել են որոշ փորձ, որը պետք է դնել կազմակերպվելիք լեկտորիումների աշխատանքի հիմքում:

Անցած տարվա 6 ամսվա ընթացքում լեկտորիումներում կարդացվել է 230 դասախոսություն, որոնց ներկա է եղել 25000 մարդ:

Սակայն եղած լեկտորիումները դեռ չեն ընդգրկում սովետական ինտելիգենցիայի լայն շերտերը, և նրանց կատարած աշխատանքը մշտական բնույթ չունի: Գիտա-լուսավորական պրոպագանդան բազմամիլիոն մասսաների սեփականություն պետք է դառնա: Այդ բանին մեծապես կօժանդակեն տեղերում կազմակերպվող մշտական լեկտորիումները:

Մշտական լեկտորիում պետք է կազմակերպել այնտեղ,

որտեղ կան խոշոր միջնակարգ դպրոցներ և անհրաժեշտ թվով ու որակով պատրաստված ուժեր (ուսուցիչներ, գյուղատնտեսներ, անասնաբույժներ, բժիշկներ, անասնաբույժներ, տնտեսագետներ և այլն)։

Քաղաքներում նպատակահարմար է լեկտորիում կազմակերպել հանգստի և կուլտուրայի պարկերին ու գրադարաններին և խոշոր արդյունաբերական օբեկտների ակումբներին կից, իսկ գյուղական շրջաններում՝ կուլտուրայի տներին, ակումբներին և գրադարաններին կից։

Մշտական լեկտորիումի ղեկավարը հանդիսանալու է տվյալ օբեկտի (որտեղ կազմակերպված է լեկտորիումը) ղեկավարը կամ մի այլ ընկեր (դպրոցի ղերեկտոր, բժիշկ, գյուղատնտես և այլն), որն իր քաղաքական, տնտեսական և ընդհանուր ու մասնագիտական պատրաստությամբ կարող է ղեկավարել լեկտորիումի աշխատանքները։ Լեկտորիումը գործելու է պարբերաբար, ամիսը ոչ պակաս քան երկու անգամ, յուրաքանչյուր ղեկավարը կազմակերպելով միաժամանակ երկու դասախոսություն։

Բաղմաթիվ խնդիրներ են դրված լեկտորիումների առաջ, այդ խնդիրների հաջող լուծումից է կախված տվյալ լեկտորիումի ընդհանուր հաջողությունը։

ԼԵԿՏՈՐԻՈՒՄՆԵՐԻ ՆՊԱՏԱԿԸ

1. Պարբերաբար դասախոսություններ պետք է կազմակերպել քաղաքական և գիտական, հատկապես բնագիտական գիտելիքների շուրջը։ Դասախոսությունների թեմաները պետք է ունենան այժմեական նշանակություն, ընդգրկելով մասսաներին հետաքրքրող և հուզող հարձերը։

2. Ուսումնասիրել լսարանը և, առաջնորդվելով պարտիայի ու կառավարության պահանջներով, հաշվի առնելով մասսաների ցանկությունը, կազմել դասախոսությունների թեմատիկ պլան։ Թեմատիկ պլանի հիմնական աղբյուրը հանդիսանալու է ներտրոնական դասախոսական բյուրոյի տարեկան թեմատիկ պլանը։

3. Հաջող կերպով կազմակերպելով աշխատանքը, դասախոսությունները կապակցելով տվյալ օբեկտի կոնկրետ խնդիր-

հերի հետ, նախատել բանվորների, կոլխոզնիկների, սովետական խնտելիդենցիայի մտավոր, քաղաքական մակարդակի աճմանը աշխատանքային կարգապահության, արտադրողականության և քերքատվության բարձրացմանը:

ԼԵԿՏՈՐԻ ՈՒՄՆԵՐԻ ԹԵՄԱՏԻԿԱՆ

Վերևում ասացինք, որ ելնելով պարտիայի ու կառավարության որոշումներից, նկատի ունենալով մասսաների պահանջը, Կենտրոնական դասախոսական բյուրոյի թեմատիկ պլանի հիման վրա, պետք է կազմել տվյալ լեկտորիումի ամսական և եռամսյա պլանը: Թեմատիկ պլանը լեկտորիումի ծրագիրն է և կողմնացույցի դեր է խաղում լեկտորիումի աշխատանքներում:

Կուլտ-լուս բաժնի վարիչը, լեկտորիումի ղեկավարը թեմատիկ պլանը կազմելիս հաշվի են առնում մասսաների առանձին խմբերի յուրահատուկ պահանջները: Ուստի չափազանց կարևոր է շերտավորված մոտեցումը: Օրինակի համար.

Ա) Կոլխոզնիկների համար գյուղատնտեսության թեմատիկայով դասախոսություններ կազմակերպելիս անհրաժեշտ է ելնել ՀամԿ(Բ)Պ Կենտկոմի 1947 թ. Փետրվարյան պլենումի որոշումներից, ադրոզոտեխնիկական, բնական գիտելիքները լայնորեն ծավալելու անհրաժեշտությունից, նկատի ունենալով հսկակրոնական սլոտպաղանդայի ծավալումը, արտադրության առաջավորների՝ Սոցիալիստական Աշխատանքի Հերոսների, բարձր քերքի վարպետների կուտակած փորձի մասսայականացումը, կոլխոզնիկներին ընթացիկ մոմենտին տեղյակ պահելու և պարտիայի ու կառավարության որոշումների կենսագործման շուրջը նրանց մոբիլիզացնելու անհրաժեշտությունը: Այդ նպատակով թեմատիկ պլանում հարկավոր է տեղ տալ հետևյալ թեմաներին. «Գյուղատնտեսության բարձրացման միջոցառումները հետպատերազմյան հնգամյակում», «Գյուղատնտեսական արտելի կանոնադրությունը կոլխոզային կյանքի հիմքն է», «Բարձր քերքի վարպետները՝ Սոցիալիստական Աշխատանքի Հերոսները», «Խնչպե՞ս ստանալ հացահատիկային կուլտուրաների կայուն ու բարձր բերք», «Անասունների քանակի ավելացման միջոցառումները», «Միջուրինյան ադրոբիոլոգիայի նշանակությունը»,

«Բնության վերափոխության ստալինյան պլանը», «Դոկուչակ-
Կոստիչև-Վիլյամսի կոմպլեքսը» և այլն:

Գիտա-բնագիտական թեմատիկայից կարելի է վերցնել՝
«Գիտությունը և կյանքը», «Կյանք կամ մյուս մոլորակների վրա»,
«Տիեզերքի կառուցվածքը», «Նդանակը և նրա կանխատեսումը»,
«Բնության անեղ երևույթները», «Կյանքի զարգացումը երկրի
վրա», «Մարդու ծագումը» թեմաները և այլն:

Պատմության բնագավառում անհրաժեշտ է հատուկ ու-
շադրություն դարձնել սովետական ժամանակաշրջանի թեմա-
ներին, ինչպես օրինակ՝

1. Ի. Վ. Ստալինը սովետական ժողովրդի առաջնորդն է
ու հաղթանակների կազմակերպիչը:

2. Սոցիալիզմի կառուցումը սովետական ժողովրդի մեծա-
դույն հաղթանակն է:

3. Հետպատերազմյան հնգամյակի երրորդ տարվա ար-
դյունքները և չորրորդ տարվա խնդիրները:

4. Սովետական գիտության զերադանցությունը:

Գրականության բնագավառում անհրաժեշտ է դասախո-
սություններ կազմակերպել ներքոհիշյալ թեմաների վերաբե-
րյալ:

1. Ռուսաց գրականության կլասիկները (Պուշկին, Լերմոն-
տով, Գոգոլ, Տոլստոյ, Չեխով, Գորկի, Մայակովսկի, Շոլխով,
Ֆադեև, ստալինյան մրցանակի լաուրեատներ՝ Իսակովսկի, Սի-
մոնով և այլն):

2. Հայ գրականության կլասիկներ՝ Խ. Արսլյան, Թուման-
յան, Շիրվանզադե, Իսահակյան և այլն.

Բ) Ավելի բարձր պատրաստություն ունեցող ունկնդիր-
ների համար (մանկավարժների, բժիշկների, դյուղատնտեսների,
ճարտարապետների, տեխնիկների և այլն) պետք է կազմակեր-
պել դասախոսություններ նաև փիլիսոփայության, հոգեբանու-
թյան, տրամաբանության և այլ թեմաների շուրջը:

Գ) Երիտասարդների և դպրոցականների համար ցանկալի
է դասախոսություններ կազմակերպել հետևյալ թեմաների մա-
սին.

1. Երիտասարդ մարդու բարոյական կերպարը.

2. Կալինինը երիտասարդության մասին.

3. Սովետական երիտասարդի վարքի մասին:
4. Ինչպե՞ս ընտրել պրոֆեսիան:
5. Բնավորության և կամքի դաստիարակության խնդիրները:
6. Ինչպե՞ս աշխատել գրքի վրա:
7. Ռեզոլուցիայի երգիչ Մայակովսկին:
8. Լենինի, Ստալինի կյանքն ու ռեզոլուցիոն դործունեությունը:
9. Սովետական հայրենասիրության մասին և այլն:

ՅԻԿԼԱՅԻՆ ԴԱՍԱԽՈՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Պրակտիկան ապացուցել է, որ առանց ին հարցերի վերաբերյալ դասախոսություններ կազմակերպելու հետ միասին շատ անհրաժեշտ է նաև կազմակերպել ցիկլային դասախոսություններ: Ցիկլային դասախոսություններն ընդգրկում են հարցերի որոշակի խումբ և ավարտում են գիտելիքների որոշ կուրս: Այդ կարգի դասախոսությունները, «համասեռ» լինելով, բովանդակությամբ իրար հետ կապված են, իրար շարունակություն են հանդիսանում և լրացնում միմյանց, ուստի և հաստատապես մնում են լսողների հիշողության մեջ ու հարստացնում նրանց գիտելիքների պաշարը: Ցիկլային դասախոսությունների ընթացքում հաղորդած գիտելիքներն ավելի հաստատուն են դառնում, երբ յուրաքանչյուր դասախոսությունից հետո ունենդիրներին հանձնարարվում է դրականության մինիմումը՝ կարգավորել, ուսումնասիրելու համար:

Ցիկլային դասախոսությունը կազմվում է 3—5, 5—10, 10—15 առանձին դասախոսություններից: Դասախոսությունների այդ տարրերը քանակը պայմանավորված է լսողների կազմով, նրանց պատրաստությամբ ու պահանջներով, թեմատիկայով: Փոքր ցիկլի համար կարելի է ընտրել 3 դասախոսություն: Օրինակ՝ «Նիկոլայ Օստրովսկին որպես սովետական երիտասարդության արիության և մարդասիրության երգիչ», Ա. Ֆադեևի «Երիտասարդ գվարդիան», Բ. Պալևոյի «Պատմվածք իսկական մարդու մասին» կամ թե՛ «Նոր դեմոկրատիայի երկրները», «Զինատանի ազատագրված շրջանները», «Խորայելի պետությունը և այլն:

Գրականության, կինոյի, թատրոնի, երաժշտության մասին ցիկլային դասախոսությունները պետք է կազմակերպել «Զվեզդա», «Լենինգրադ» ամսագրերի վերաբերյալ ՀամԿ(Բ)Պ Կենտկոմի 1946 թ. պատմական որոշման և այդ առթիվ ընկ. Ժգանովի տված ղեկուցման լույսի տակ:

Շատ կարևոր է դասախոսությունների ցիկլ կազմակերպել ուսումնական պետության և հասարակության մասին, հետևյալ թեմաներով.

1. Սովետական պետության ուժի և հզորության աղբյուրները.

2. Սոցիալիստական տնտեսության առավելությունները կապիտալիստականի հանդեպ:

3. ՍՍՌՄ-ը բաղմազդ ժողովուրդների համերաշխ միություն է:

4. Մեր նպատակը կոմունիզմն է.

5. Լենինի, Ստալինի պարտիան մեր հաղթանակների կազմակերպիչն ու ոգեշնչողն է.

6. Լենինը և Ստալինը որպես մարդկության հանճարներ և այլն:

Դասախոսությունների յուրաքանչյուր ցիկլը կազմակերպելիս հարկավոր է թեմաների միջև պահպանել իմաստի, տրամաբանական, քաղաքական կապը և անպայման կազմակերպել նախատեսնված թեմաների վերաբերյալ դասախոսություններ, որպեսզի տվյալ ցիկլով իրոք հաղորդվի գիտելիքների որոշակի պաշար, որպեսզի, դեպքերի երևույթների կապակցությունը պահպանվի, նրանց միջև լինի տրամաբանական կապ:

Դասախոսություններ կազմակերպելու համար կարելի է նկատի ունենալ հետևյալ օրինակները՝

1. Ռուս մեծ ժողովուրդը որպես ականավոր ազդ և սովետական Միության ղեկավար ուժ թեմայի վերաբերյալ դասախոսությունների ցիկլը:

ա) ռուս ժողովրդի ծագումը.

բ) ռուս մեծ ժողովրդի դերը պատմության մեջ.

գ) ռուս ժողովրդի մարտական տրագիցիաները.

դ) ռուս ժողովրդի պայքարն իր անկախության համար.

ե) ռուսական կուլտուրայի համաշխարհային նշանակությունը.

դ) ռուս ժողովուրդը որպէս ազատարար, հերոս ժողովուրդ և նրա ավանդարդային դերը Հոկտեմբերյան Սոցիալիստական Մեծ Ռեւոլուցիայի հաղթանակի գործում:

է) հայ և ռուս ժողովուրդների դարավոր բարեկամութիւնը:

2) Գարնանացանի սեզոնում անհրաժեշտ է կազմակերպել դասախոսութիւնների հետեյալ ցիկլը.

ա) ցանքաշրջանառութեան ճիշտ կազմակերպման նշանակութիւնը.

բ) հողի ճիշտ մշակումը որպէս բարձր բերք ստանալու հիմնական պայման.

գ) սերմացուի նախապատրաստումը.

դ) պարարտացման դերը գյուղատնտեսութեան կուլտուրաների բերքատւութեան բարձրացման գործում.

ե) ինչպէս ստանալ հացահատիկային կուլտուրաների բարձր ու կայուն բերք:

զ) աշնանացան կուլտուրաների մշակումը.

է) երաշտը և նրա դեմ մղվող պայքարը.

3. Սովետական գրականութեան վերաբերյալ կազմակերպել՝

ա) սովետական գրականութեան բարձր գաղափարականութեան համար.

բ) Մաքսիմ Գորկին որպէս ռուս մեծ գրող.

գ) սովետական դարաշրջանի հանճարեղ բանաստեղծ Մայակովսկին.

դ) Շոլոխովի ստեղծագործութիւնները:

ե) սովետական անյլանի գրող Ա. Ն. Տոլստոյ, Հ. Հակոբյան,

Ա. Իսահակյան, Ն. Զարյան, Դ. Դեմիրճյան:

Թեմատիկան, ինչպէս նաև առանձին թեմաները նախընտրված ժամանակ, պետք է տեղ տալ այժմեական, ներկան արտահայտող, սովետական կուլտուրայի, գիտելիքի և արվեստի զբաղեցրող, կապիտալիստական կուլտուրայի, արվեստի ուսուցիչին բնույթը մերկացնող թեմաներին: Այդ թեմաները պետք է հեռու մնան ավելորդ ակադեմիզմից, լինեն հանրամատչելի աշխատավորութեան համար:

Թեմատիկ ցիկլների հետ կարելի է կազմակերպել նաև այնպիսի դասախոսութիւնների սերիա, որոնք ընդհանուր թեմա-

յով կապված են միմյանց հետ, բայց ընտրված են գիտության տարրեր բնագավառներից: Օրինակ, հինգ դասախոսությունից քաղկացած սերիան իր մեջ կարող է պարունակել մեկական դասախոսություն՝ գիտա-բնագիտական, տնտեսագիտական, պատմական, աշխարհագրական և գրական թեմաներից:

Դասախոսությունների սերիան կազմակերպելիս լեկտորի ուժի ղեկավարը նկատի ունի ոչ թե ունկնդիրների գիտելիքների խորացնելը գիտության մի բնագավառում, այլ լսողներին ծանոթացնելու տվյալ ժամանակաշրջանի գիտության տարրեր բնագավառներից այժմեական խնդիրներին:

Բացառիկ հետաքրքրությամբ ունկնդիրները լսում են կիրառական դասախոսություններից: Դասախոսություններին հանդերձում է համապատասխան կինոնկարի ցուցադրումը: Դասախոսն իր ելույթով ունկնդիրներին ուշադրությունը կենտրոնացնում է թեմայի վրա, որից հետո նրանք նկարը դիտում են մեծ հետաքրքրությամբ: Այդ դեպքում նյութն անհամեմատ ավելի մատչելի է դառնում և դաստիարակչական մեծ նշանակություն է ստանում: Օրինակի համար՝

1. «Ստալինյան Կոնստիտուցիան որպես հաղթանակող սոցիալիզմի կոնստիտուցիա» թեմայի մասին դասախոսությունը լսելուց հետո կարելի է ցուցադրել «Ընկեր Ստալինի ղեկուցումը ՍՍՌ Միության Կոնստիտուցիայի նախագծի մասին Սովետների Համամիութենական 8-րդ արտակարգ համագումարում, 1946 թ. նոյեմբերի 25-ին» կինոնկարը:

2. «Սովետական հայրենասիրության ուժը» դասախոսությունից հետո ցուցադրել «Զոյան» ֆիլմը:

3. «Սովետական կինը Հայրենական Մեծ պատերազմում» դասախոսությունից հետո՝ «Նա պաշտպանում է հայրենիքը» ֆիլմը:

4. «Լենինը և Ստալինը որպես Հոկտեմբերյան Սոցիալիստական Մեծ Ռևոլուցիայի առաջնորդներ ու կազմակերպիչներ» թեմայից հետո՝ «Հրացանավոր մարդը» կամ «Լենինը Հոկտեմբերին» ֆիլմը:

5. «Նիկոլայ Օստրովսկին որպես սովետական երիտասարդության հայրենասիրության և արիության երգիչ» դասախոսությունից հետո՝ «Ինչպե՞ս էր կոմիւնում պողպատը» ֆիլմը:

6. «Սեվաստոպոլի հերոսական պաշտպանությունը» դասախոսությունից հետո՝ «Ադմիրալ Նախիմով» ֆիլմը և այլն:

Գյուղի սոցիալիստական վերակառուցումն արմատական փոփոխություն է առաջ բերել գյուղացիության ողջ կյանքում: Կոլխոզային կարգերի հաղթանակի հիման վրա վերացվել է գյուղի դարավոր հետամնացությունը: Վերացել է անգրագիտությունը, խավարը, փոխվել է գյուղի կենցաղը, դարգացել է կոլխոզային գյուղացիության ճաշակը, բարձրացել է նրա կուլտուրան:

Ստալինյան հնգամյակների ընթացքում գյուղում աճել են բազմաթիվ կադրեր, որոնք տիրապետելով սովետական գիտությանը, կուլտուրային, գյուղում բարձր են պահում սոցիալիստական կուլտուրայի հաղթական դրոշմը:

Կոլխոզային արտադրությունն աճեցրել է գյուղատնտեսների, անասնաբույժների, տեխնիկների բազմաթիվ կադրեր, որոնք կարող են մեծապես օգնել գյուղում գիտաբնագիտական պրոպագանդան ծավալելու գործին: Այդ ուղղությամբ մեծ գործ կարող են կատարել կոլխոզային լեկտորիումները:

Կոլխոզային լեկտորիումների նպատակն է կուլտուր-լուսավորական պրոպագանդան կապակցել կոլխոզային արտադրության հետ, օժանդակել մեծ առաջնորդ ընկեր Ստալինին տված խոստումների կենսագործմանը, պետական պարտավորությունների կատարմանն ու գերակատարմանը:

Լեկտորիումը պետք է ամփոփի գյուղատնտեսության առաջավորների՝ Սոցիալիստական Աշխատանքի Հերոսների, բարձր բերքի վարպետների կուլտակած հարուստ փորձը և վերջինս դարձնի լայն մասսաների սեփականությունը:

Կոլխոզային լեկտորիումի ուշադրության կենտրոնում պետք է դրվի ՀամԿ(Ը)Պ Կենտկոմի Փետրվարյան պլենումի որոշումների հետևողական իրադրծման, հետպատեցրածյան հնգամյակի 4-րդ տարվա պլանների կատարման ու գերակատարման համար մղվող պայքարը:

Կարգացվող դասախոսությունների առանցքը պետք է կազմի կոլխոզնիկներին սովետական հայրենասիրության վեհ գաղափարով, սոցիալիստական գիտակցությամբ դաստիար-

բաղելը, պարտիայի ու կառավարութեան որոշումները մասսաներին պարզաբանելը:

Լեկտորի ուսում կարգացվող դասախոսութեանն էր պետք է նվիրված լինեն երկրագործութեան, անասնաբուծութեան դարգացման դիտական հիմունքների պարզաբանմանը, բերքատրվութեան ու մթերատրվութեան բարձրացմանը:

Դասախոսութեանները պետք է լինեն հանրամատչելի, մասսաների համար հասկանալի, սակայն միաժամանակ պետք է համապատասխան լինեն դիտութեան ներկա մակարդակին, պետք է կոլխոզնիկներին մատերիալիստորեն պարզաբանեն բնական երևույթները, սովետական դիտութեան, տեխնիկայի նվաճումները, պետք է մերկացնեն կրօնական նախապաշարումները ու կապիտալիզմի այլ մնացուկները մարդկանց դիտակցութեան մեջ և լիկվիդացնեն դրանք:

Լեկտորի ուսման դասախոսների խմբակի անդամներն իրենց հանձնարարվող թեմայի տեքստը կադմուս ու ներկայացնում են խմբակին քննելու համար: Տեքստը խմբակի կողմից ընդունվելուց հետո, ներկայացվում է Կուլտ-լուս բաժնի վարիչին՝ հաստատելու համար: Նպատակահարմար է որպեսզի Կուլտ-լուս բաժնի վարիչն աշխատի լինել տեղերում և կարգացվող դասախոսների տեքստերը հաստատի լեկտորի ուսման դասախոսների հավաքում:

Լեկտորի ուսում դասախոսութեան կարգալու համար կարելի է օգտագործել շրջանի կենտրոնի համապատասխան աշխատողներին, որոնք պաշտոնական դործուղման մեջ գտնվելու ժամանակ հնարավորութեան կունենան տվյալ լեկտորի ուսում լինելու և դասախոսութեան կարգալու, փորձադաշտերի դիտական աշխատողներին և կոլտնտեսութեան առաջավոր օգակավարներին, բրիգադավարներին, ղեկավար ընկերներին, Սոցխալիտական Աշխատանքի Հերոսներին, որոնք կպատմեն իրենց կուտակած փորձը:

Լեկտորի ուսման աշխատանքներին կարող են օգնել նաև շաքային կոլխոզնիկներն ու կոլխոզնիկուհիները, որոնք պրակտիկայում կենսագործում են սովետական դիտութեան նվաճումները՝ Միչուրինի, Լիսենկոյի առաջավոր ուսումնաբեր, որոնք ձեռք են բերել հարուստ փորձ:

Լեկտորի ուժով մեծ հետաքրքրությամբ կլավեն նաև տեղական նշանակութիւն ունեցող գալառագիտական թեմաներ: Օրինակի համար, բոլորին կհետաքրքրի իրենց կոլխոզի պատմութիւնը, Սովետական իշխանութեան, Հայրենական Մեծ պատերազմի տարիներին իրենց գոլգոլում, շրջանում կատարված գործերի պատմութիւնը, գոլգի շրջակայքում, շրջանում եղած պատմական հուշարձանների պատմութիւնը:

Կարգացվող դասախոսութիւնը ամէլի հետաքրքրի կլինի, երբ դասախոսութիւնից հետո կազմակերպվի գրական-գեղարվեստական երեկո: Այդ երեկոն պետք է պատրաստել նախօրոք:

Լեկտորի ուժով դասախոսութիւններ կարգալու համար վարելի է լայն չափով օգտագործել Կենտրոնական դասախոսական բյուրոյի տպագրած «Զբույց-թերթիկները», դասախոսութիւնների տեքստերը և բրոշյուրները:

Լեկտորի ուժի ղեկավարը միջոցներ է ձեռք առնում կարգացվող դասախոսութիւններին ամէլի շատ մասնաւոր մասնակից դարձնելու համար:

ԼԵԿՏՈՐԻ ՈՒՄ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

Հայրենական Մեծ պատերազմի տարիներին և պատերազմից հետո կոլխոզային արտադրութեան մեջ են ընդգրկված շատ ու շատ երիտասարդներ, որոնք ծառայել են զինուորական, որոնց հոգում ու հետաքրքրում են բազմաթիւ խնդիրներ: Երիտասարդութեանը հետաքրքրում են կոմունիստական բարոյականութեան, սովետական հայրենասիրութեան խնդիրները, սովետական գիտութեան, արվեստի, տեխնիկայի նորագոյն նվաճումները, միջազգային իրադրութիւնը, գրական թեմաները և այլն:

Երիտասարդութեան համար կազմակերպվող լեկտորի ուժի հերում կարելի է լսել դասախոսութիւնների հետեյալ ցիկը:

1. Մարքսիզմ-լենինիզմը կոմունիստական բարոյականութեան մասին:

2. Ամուսնութիւնը և ընտանիքը սովետական պետութեան օրենքներում:

3. Երջանկութեան և բախտավորութեան մասին:

4. Երիտասարդությունը որպէս կոմունիստական հասարակություն կառուցող սերունդ:

Երիտասարդությանն անշուշտ հետաքրքրում են իւր շրջանի, գյուղի, ռեսպուբլիկայի պատմական անցյալը, չքնաղ ներկան ու ավելի երջանիկ ապագան: Այդ հետաքրքրությունը բավարարելու համար նպատակահարմար է դասախոսությունից առաջ, որոշ դեպքերում՝ դասախոսությունից հետո, կազմակերպել համապատասխան էքսկուրսիաներ դեպի պատմական հուշարձանները, Ատալինյան հնդամյակների նորակառույցները, նորակառույց քաղաքներն ու ավանները, սոցիալիստական կուլտուրայի օջախները, մեծ առաջնորդ ընկ. Ստալինի ծննդավայրը:

ԼԵԿՏՈՐԻՈՒՄ ԻՆՏԵԼԻԳԵՆՅԻԱՅԻ ՀԱՄԱՐ

Լեկտորիումներում հաճախ կազմակերպւում են բաղձաթիւ դասախոսություններ, դանազան թեմաներով: Մակայն լսարանի բաղձազան պահանջը որոշ դեպքերում հաշիւի ի առնչւում: Շատ դեպքում, հաշիւի առնելով միայն «շարքային ունկնդիրներին» բանվորների, կոլխոզնիկների մտավոր կարողությունը, կազմակերպւում են դասախոսություններ, որոնք քիչ են հետաքրքրում կամ բոլորովին չեն հետաքրքրում ինտելիգենցիային, և այդպիսով ինտելիգենցիան դուրս է մնում գիտա-լուսավորական պրոպագանդայի ցանցի սպասարկումից:

Ծիշտ է, համեմատաբար դժվար է ինտելիգենցիային հետաքրքրող հարցերի շուրջը տեսական ու գիտական անհրաժեշտ լիցքով ու նշանակութեամբ բարձրորակ դասախոսություն կազմակերպելը, սակայն այդ դժվարությունը կարելի է հաղթահարել լեկտորիումների միջև ուժերի փոխանակում կատարելով, շրջանային դասախոսական խմբակի և երբեմն էլ Կենտրոնական դասախոսական բյուրոյի օգնութեամբ:

Լեկտորիումի ղեկավարը թեմատիկ ալանը կազմելու առանձնապէս պետք է նշի ինտելիգենցիայի համար նախատեսւած թեմաները և վաղօրոք հող տանի այդ թեմաներով դասախոսությունները կազմակերպելու մասին:

Ցանկալի է խորհրդակցել գյուղի ինտելիգենցիայի հետ թեմաներն ընտրելու, դասախոս առաջադրելու և այլ հարցերի շուրջը:

Բացի լեկտորի ուսմանը ղեկավարող տեսակներից, ցանկալի է ավելի շերտավորված մոտեցում ունենալ կոնտինգենտ ընտրելու հարցին: Շատ նպատակահարմար է ծնողների, ուսուցիչների համար, թատրոնի, երկաթուղային տրանսպորտի, առևտրի, բժշկասանիտարական և այլ աշխատողների համար կազմակերպել հատուկ լեկտորի ուսմանը՝ նեղ մասնագիտական հարցերի շուրջը: Օրինակ՝ ծնողների համար կարելի է կազմակերպել դասախոսությունների ցիկլ, որոնք նվիրված լինեն երեխաների կոմունիստական դաստիարակության հարցերին, երեխաների դաստիարակման դործում ծնողների ունեցած պարտականություններին, իսկ արվեստի աշխատողների համար դասախոսություններ կազմակերպել արվեստին վերաբերող խնդիրների շուրջը:

Ծնողների համար կարգացվող դասախոսությունների ժամանակ ցանկալի է կազմակերպել աշակերտների ելույթ՝ դրական-դեղարվեստական ծրագրով: Այդ ժամանակով, ծնողները դասախոսություն կդան նշանակված ժամից շուտ և դո՛ւն կհեռանան դահլիճից: Արվեստի աշխատողների համար կարգացվող դասախոսությունից հետո ցանկալի է կազմակերպել արվեստի աշխատողների ելույթ՝ օրվա թեմայի շուրջը: Այդ դեպքում ունենդիրները նույնպես կհավաքվեն նշանակված ժամից շուտ և անշուշտ դո՛ւն կմնան այդպիսի ելույթից:

ԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ՊՐՈՊԱԳԱՆԴԱՅԻ ԱՅԼ ՁԵՎԵՐ

Լեկտորի ուսմանը բացի դասախոսություններից կարելի է կազմակերպել նաև դրական, դեղարվեստական «ընթերցում», մի բան, որը շատ տարածված է մեր եղբայրակից ռեսպուբլիկաների առաջավոր քաղաքներում: «Ընթերցումը» կիրառվում է երկար ընդմիջում պահանջող թեմաների նախապատրաստման համար: Ենթադրենք, թե կուլտուրայի տան լեկտորի ուսմանը ցանկանում է կազմակերպել Միչուրինյան, Պուշկինյան, Թումանյանական, Լենինյան, Ստալինյան «ընթերցում»: Լեկտորի ուսմանը կեկավարն աշխատանքը պլանավորում է այնպես, որ տարվա ընթացքում 3-4 այդպիսի «ընթերցում» կազմակերպվի: Այդ նպատակով մի եռամսյակ հատկացնում է մի թեմայի վերա-

քերյալ «Ընթերցմանը»: Ընդունենք, որ 1949 թ. երկրորդ եռամսյակում ցանկություն կա Միչուրինյան «Ընթերցում» կադմակերպելու: Այդ հարցի վերաբերյալ ընտրվում են համապատասխան թեմաներ, որոնք կարտահայտեն Միչուրինի կյանքի ու գործունեության կարևոր շրջանները և նրա ուսմունքի նշանակությունը: Ընտրված թեմաների վերաբերյալ դասախոսություն հետ միասին պետք է կատարվի համապատասխան դիտական փորձի ցուցադրում: Ահա այդ պատճառով այդպիսի թեմաների պատրաստումը շատ ժամանակ է պահանջում, այնքան ժամանակ, որ հնարավորություն լինի մի շարք թեմաներ վերցնելու և համապատասխան փորձ կադմակերպելու:

Լեկտորությունում կարելի է կադմակերպել նաև դպրոցականների համար «Կիրականօրյա ցերեկույթներ», իսկ երիտասարդության համար՝ «Հանգստյան օրվա համալսարան»: Վերջին միջոցառումները կարող են արտահայտվել էսկիզոզիկ դասախոսությունների, դասախոսությունների ցիկլի, կինո դասախոսությունների, կոմպլեքս-դասախոսությունների կամ դրույցների ձևով, միայն այն մասսաների համար, ովքեր աշխատանքային օրերի ընթացքում, իրենց աշխատանքի ընույթի պատճառով հնարավորություն չունեն լսելու Լեկտորությունում կադմակերպվող դասախոսությունները:

Ամառվա ընթացքում կուլտուրայի տան Լեկտորությունի աշխատանքը պետք է փոխադրել քաղաքային կամ կոլխոզային հանգստի և կուլտուրայի պարկ, էստրադային հրապարակ, դաշտ: Այս դեպքում շատ հետաքրքիր է «Կյանքի նորությունների» յուրահատուկ բանավոր ամսագիրը, որը ոչ թե տպագրվում այլ պատմվում է էստրադայից, բեմից:

«Կյանքի նորությունների» ամսագիրը հիմնականում արտացոլելու է տեղական կադմակերպությունների և անվանի մարդկանց՝ Սովետական Միության Հերոսների, Սոցիալիստական Աշխատանքի Հերոսների, ստալսանովականների անձնուրաց աշխատանքը, նրանց աշխատանքի նորանոր մեթոդները: Այդ աշխատանքին կարելի է մասնակից դարձնել ինքնադործ խմբակների—(ասմունքի, թատերական) անդամներին, ռադիոթերթերի աշխատակիցներին և մյուս շնորհալի ուժերին:

Աշխատանքի հետաքրքիր մեթոդներից մեկն էլ դրական

Տնտրություններն տեսության կազմակերպումն է: Այդ նպատակով լեկտորի ուսումնական ծրագրի ներքին շրջանակները, գրադարանների աշխատակիցները և ընթերցող ակտիվը:

Գրական տեսության մասին խոսող ընկերներն ընթերցասեր հասարակությանը պատմում են տվյալ ժամանակաշրջանում լույս տեսած նոր գրքերի մասին, նշելով այդ գրքերի գրական-գեղարվեստական, գիտական ու քաղաքական արժեքը: Այդ թեմայով կատարվող ելույթն ընթերցող հասարակության մեջ սեր է առաջացնում գեպի գիրքն ընդհանրապես, գեպի տվյալ գործը՝ մասնավորապես:

Լեկտորի ուսմանը, դասախոսական պրոպագանդան օրինակելի կազմակերպելով իրենց վայրերում, կարող են դիմել «դաստրոլներին»: Նրանք կարող են իրենց պատերից գուրս գալ, զնալ հարևան գյուղը, ավանը՝ այդ օրեկանները նույնպես իրենց օրրիտի մեջ ընդգրկելու համար:

ՈՒՆԿՆԴԻՐՆԵՐԻ ԵՎ ԴԱՍԱԽՈՍՆԵՐԻ ԿԱԶՄԻ ՄԱՍԻՆ

Սովորաբար ընդունված է դասախոսություն կարգալ ունեցող ընկերների համար ընդհանրապես: Բայց նպատակահարմար է նաև կազմակերպել դասախոսություններ որոշակի լսողների համար: Առաջին դեպքում դասախոսի նպատակը նեղ մասնագիտական գիտելիքներ հաղորդելը չէ, այլ տվյալ ժամանակաշրջանում մասսաներին ամենից շատ հետաքրքրող ընդհանուր հարցերի մասին որոշ տեղեկություններ հաղորդելը, իսկ երկրորդ դեպքում դասախոսը ցանկանում է գիտության տվյալ քննադատի որոշ գիտելիքներ հաղորդել որոշակի խումբ մարդկանց: Այդ բանը լեկտորի ուսումնական ծրագրի է առնել, հատկապես ցիկլային դասախոսությունների ժամանակ: Որպեսզի լեկտորի ուսման իր առաջադրած նպատակին հասնի, պետք է ձգտել այն բանին, որ ցիկլային դասախոսությունների ժամանակ լսողների կազմը հիմնականում անփոփոխ և կայուն լինի, ասենք թե՛ բաղկացած լինի ծխախոտադորձներից, անասնապահներից, այգեգործներից, կամ հանքափորներից, մանածադորձներից և այլն: Ունենդիրների կազմը մնայուն, կայուն լինելու դեպքում, դասախոսները կկարողանան թեմաների ընտրություն կատարելիս հաշվի առնել

թեմաների «մոտիկությունը», «համասեռությունը» դրանց տրամաբանական, իմաստային փոխադարձ կապը և այլն:

Լեկտորիումի հաջողության հիմնական երաշխիքը դասախոսների ճիշտ ընտրությունն է: Դասախոս լինելը պատվավոր դործ է: Դասախոսը բոլշևիկյան պարտիայի գաղափարների պրոպագանդիստն է:

Լենինը, մեծ տեղ տալով պրոպագանդիստական կադրերին, մեծապես արժեքավորել է նրանց: 1909 թ. կապրի կզդում կադմակերպված պարտիական դպրոցի դասախոսների մասին Լենինն այն կարծիքն է հայտնել, որ գլխավոր դեմքը դպրոցում դասատուն է, որի պատրաստությունից, քաղաքական ու գաղափարական համոզվածությունից կախված է լսողների բոլշևիկյան գաղափարներով, մատերիալիստական ուսմունքով դասավարակելը:

Այդ նպատակով լուրջ ուշադրություն պետք է դարձնել դասախոսների կազմի ընտրությանը: Որպես դասախոս պետք է առաջադրել որակյալ, մասնագիտորեն և քաղաքականապես պատրաստված ընկերներին, խույս տալ պատահական մարդկանց դասախոսություններ հանձնարարելուց:

Դասախոսություններ կարգալու դործում կարելի է ընդգրկել տեղական ուժերը (ուսուցիչ, կուլտուրայի տան վարիչ, դյուդատնտես և այլն), շրջանային կուլտ-լուս բաժնի դասախոսական խմբակի անդամներին, պարտիական շրջկոմների դասախոսական խմբակների անդամներին և դասախոսական բյուրոյի դասախոսներին:

Լեկտորիումի թեմատիկ պլանը կազմելիս պետք է հաշվի առնել, թե ո՞ր թեման, ո՞վ, ո՞րտեղ է կարգալու: Կենտրոնական դասախոսական բյուրոյի դասախոսների դասախոսությունը լսելու անհրաժեշտության դեպքում հարցը պետք է համաձայնեցնել դասախոսական բյուրոյի հետ:

Կարևոր հարց է դասախոսի բարեխիղճ, պարտաճանաչ լինելը: Տվյալ լեկտորիումի դասախոսը, իմանալով իր թեման, ուսումնասիրում է վերջինս, կարդում է անհրաժեշտ գրականություն, կազմում է կարգացածի կոնսպեկտը, կազմում նյութի կառուցման պլանը և ապա գրավոր շարադրում է իր ասելիքը կամ, ինչպես ասում են, կազմում է թեմայի տեքստը:

կազմված տեքստը նախօրոք պետք է դրախտավի և ապա քննարկվի լեկտորիումի դասախոսների խմբակում: Տեքստի այդպիսի բաղմակողմանի քննարկումը բարձրացնում է դասախոսի պատասխանատվությունը և թեման դառնում է բովանդակավոր:

ԿԱԶՄԱԿԵՐՊՉԱԿԱՆ ՄԻՋՈՅԱՌՈՒՄՆԵՐԸ ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՊԼԱՆԱՎՈՐՈՒՄԸ

Շրջանում լեկտորիում կազմակերպելու և աշխատանքը լավ հիմքերի վրա դնելու նպատակով կուլտուրան բաժնի վարիչը մշակում է միջոցառումներ և պարտիական շրջկոմի հետ համաձայնեցնելուց հետո, ներկայացնում է Աշխատավորների Դեպուտատների Շրջսովետի դործկոմի հաստատմանը:

Լեկտորիումի աշխատանքների համար առանձնապես պատասխանատու են կուլտուրայի տան դիրեկտորը, ակումբի, դրադարանի վարիչը: Նրանք լեկտորիումի աշխատանքը համաձայնեցնում են շրջանային դասախոսական խմբակի ղեկավարի և կուլտուրան բաժնի վարիչի հետ ու պատասխանատու են կուլտուրան բաժնի առաջ: Վերջինս լեկտորիումի աշխատանքները պետք է համարի իր օրենքի աշխատանքի կարևոր բնադավաններից մեկը, դասախոսներով, մեթոդական զգնությամբ պետք է օժանդակի լեկտորիումի ղեկավարներին և վերահսկողություն սահմանի լեկտորիումում կատարվող աշխատանքի նկատմամբ:

Լեկտորիումում աշխատանքն ինքնահոսով չպետք է ընթանա, այլ պետք է պլանավորված լինի: Նպատակահարմար է կազմել եռամսյա պլան, իսկ վերջինիս հիման վրա ամսական օպերատիվ պլան:

Աշխատանքի պլանը հարկավոր է կազմել շրջանային դասախոսական խմբակի միջոցառումների կամ, ինչպես կոչվում է, թեմատիկ պլանի ձևով: Եռամսյա պլանում նշել հետևյալ միջոցառումները՝ դասախոսների խմբակի հավաքույթ (կազմակերպչական հարցեր քննելու նպատակով), մեթոդական պարավումներ (նշել թեման), կարդացվող թեմաները, դասախոսի անուն-ազգանունը, դասախոսության վայրը, ժամկետը (ամիսը) և իսկ ամսական օպերատիվ պլանում հարկավոր է ցույց տա

տվյալ ամսվա միջոցառումները: Ամսական պլանն ավելի կոնկրետ է լինելու, ուստի այստեղ պետք է ցույց տալ կոնկրետ միջոցառումները՝ պարամոմենտ, դասախոսություն, դասախոսություն տեղը, ժամկետը (ամսաթիվն ու ժամը):

Լեկտորի ու մի աշխատանքի պլանը տվյալ օրեկտի (կուլտուրայի տան, ակումբի, դրադարանի) աշխատանքի ընդհանուր պլանի մի մասն է լինելու, և դրա անթերի կատարման համար պատասխանատու է այդ օրեկտի ղեկավարը:

Աշխատանքը պլանավորելիս պետք է առաջնորդվել նեյտրոնական դասախոսական բյուրոյի տարեկան թեմատիկ պլանով, շրջանային դասախոսական խմբակի եռամսյա ու ամսական պլաններով, պարտիայի, կառավարություն- կողմից առաջադրվող խնդիրներով, պետք է նկատի ունենալ տվյալ շրջանի ու օրեկտի պայմանները և մասսաների պահանջները: Հետևաբար լեկտորի ու մի աշխատանքի պլանը պետք է սերտորեն կապված լինի պրակտիկ աշխատանքների հետ և դերծ լինի ակադեմիզմից:

Պլանում պետք է արտացոլվեն մասսայական-քաղաքական կամպանիաները, հորելյանական և օրացույցային կարևոր դեպքերը: Այդ նպատակով նախօրոք պետք է օրացույցից վերցնել տվյալ եռամսյակին վերաբերվող կարևոր դեպքերի վերաբերյալ համապատասխան տվյալներ և վերջինների համաձայն կազմել «հիշատակարան-օրացույց»:

Թեմատիկ պլանը կազմելուց առաջ անհրաժեշտ է պարզել թե տվյալ ամսում, եռամսյակում լեկտորի ու մի աշխատանքի լսողների ինչպիսի՞ խմբերին է սպասարկելու (կոլխոզային, բանվորական մասսաների, ինտելիգենցիայի, երիտասարդություն, դպրոցականներ և այլն) և ըստ այնմ էլ կազմել պլանը:

Այնուհետև պետք է որոշել, թե տվյալ ժամանակաշրջանում քանի՞ դասախոսություն հնարավոր է կազմակերպել, նկատի ունենալով օրեկտի աշխատանքի ընդհանուր պլանը, դասախոսների թիվը, շենքի հարմարությունները և այլ հանգամանքներ: Վերջապես կազմած պլանը պետք է քննել կուլտուրայի տան ակումբի, դրադարանի խորհրդում հաստատելու համար:

ՈՒՆԿՆԴԻՐՆԵՐԻՆ ԴԱՍԱԽՈՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՄԱՍՆԱԿԻՑ
ԴԱՐՁՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Լեկտորիումի զեկավարը պետք է հող տանի ունկնդիրներին դասախոսությանը նախապատրաստելու համար: Այդ նախա-տախտիկ կուլտուրայի տունը, դրադարանը, ակումբը, հայտարար-րության բոլոր ձևերն օգտագործելով, 3-4 օր առաջ լսողներին իրադեկ է դարձնում առաջիկա դասախոսության մասին: Դասա-խոսությունից առաջ կուլտուրայի տանը, ակումբում, դրադա-րանում կայացած ժողովների—դրական-դեղարվեստական երե-կոների ժամանակ բանավոր հայտարարություն է արվում դա-սախոսության թեմայի, օրվա, տեղի, դասախոսի մասին:

Ունկնդիրներին ավելի տրամադրելու համար, շրջանային թերթում, ռադիոթերթում և պատի թերթում պետք է տալ համապատասխան հայտարարություն: Թերթերում անհրաժեշտ է տպագրել նաև ամսական օպերատիվ (օրացույցային) պլանը ի դիտություն լեկտորիումների ունկնդիրներին:

Այդ հանդամանքը հնարավորություն կտա ունկնդիրներին նախօրոք իմանալու և իրենց մոտ նշելու, թե ե՞րբ, ի՞նչ դասա-խոսություն են լսելու իրենք:

Ամսական-օրացույցային պլանը կարելի է հրապարակել տպագրված աֆիշի կամ ձեռագիր պլակատի ձևով:

Առաջիկա դասախոսության մասին նույնպես կարելի է հայտարարել աֆիշով, վերջինս փակցնելով բաղմամարդ հրա-պարակներում, կուլտուրայի և հանգստի պարկերի, կինո-թատ-րոնների, կուլտուրայի տան, ակումբի մուտքի առաջ:

Աֆիշներում անհրաժեշտ է հայտարարել դասախոսության թեման, ժամկետը, տեղը, դասախոսի օվ լինելը և այլն: Տպա-դիր աֆիշը կարելի է կաղմել հետևյալ ձևով:

. շրջանի կուլտուրայի տան դահլիճում
1949 թ. մարտի 20-ին, երեկոյան ժամը 7-ին, կկայանա

Դ Ա Ս Ա Խ Ո Ս Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

«ԱՐԵՎԻ ԵՎ ԼՈՒՍՆԻ ԽԱՎԱՐՈՒՄԸ» թեմայով

ԴԱՍԱԽՈՍ՝

Մուտքը հրավիրատոմսերով (կամ աղատ է): Տոմսերն
ստանալ կուլտ-լուսբաժնում:

Եթե դասախոսությունը վճարովի է, ապա աֆիշի մեջ այդ
քանը հարկավոր է դրել և մատնանշել, թե որտեղից կարելի է
ձեռք բերել տոմսը:

Աֆիշներում, պլակատներում երբեմն անհրաժեշտ է դրել
դիպուկ, բովանդակությամբ հարուստ, թեմային վերաբերող
քաղվածք՝ պլակատ-լողունդի ձևով ու չափով: Օրինակի համար՝

«Կոմունիզմը—ՍՈՎԵՏԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆՆ Է ՊԼՅՈՒՍ
ՈՂՋ ԵՐԿՐԻ ԷԼԵԿՏՐԻՖԻԿԱՅԻԱՆ» (Լենին):

Գրավոր ռեկլամի (հայտարարության) հետ միասին հար-
կավոր է օգտագործել բանավոր պրոպագանդան: Պարտիական
կոմերիտական, սլոգանիստական կադմակերպությունների
միջոցով ավյալ օրվա դասախոսության մասին պետք է հայտա-
բարել օրեկտի բոլոր աշխատողներին և ապահովել նրանց մաս-
նակցությունը դասախոսությանը:

Ռեկլամները պետք է լինեն կարճ, արտահայտիչ, մատ-
չելի ու հասկանալի: Ռեկլամների մեջ անհրաժեշտ է ընդգծել
նաև դասախոսի ազդանունը, նրա կոչումը և դիտական աստի-
ճանը:

Եթե հայտնի է, որ դասախոսությունը դուգակցվելու է դիա-
պոզիտիվների, դիաֆիլմերի, կինո-նկարների օգտագործման և
ցուցադրման հետ, պետք է այդ մասին ունկնդիրներին իրազեկ
պահել:

Եթե հայտնի է, որ դասախոսությունը վերաբերում է գրա-
կանության հարցերին և որ դասախոսությունից հետո ելույթ է
ունենալու խոսքի, ասմունքի վարպետը կամ գրականագետը,
ապա այդ մասին նույնպես պետք է հայտարարել:

Եթե դասախոսությունը ներածական խոսք է համարվում
կինո-նկարի համար, այդ մասին դարձյալ անհրաժեշտ է տե-
ղեկացնել ունկնդիրներին:

Տխուր պատկեր է ստացվում այն ժամանակ, երբ լեկտո-
րիումի ղեկավարը մոռացած է լինում ունկնդիրներին դասա-
խոսությանը նախապատրաստելու անհրաժեշտությունը և այդ
մասին մտածում է միայն այն ժամանակ, երբ դասախոսը ներ-
կայանում է դասախոսության: Հասկանալի է, որ այդ դեպքում

դասախոսությանը ներկա կլինեն քիչ թվով ունկնդիրներ։ Այդ բանից խուսափելու համար, ցանկալի է դասախոսության թեմայի ու նշանակության մասին տեղեկություններ հաղորդել կազմակերպված մասսաների մեջ՝ ցեխում, բանվորական, ուսանողական հանրակացարաններում, կոլխոզային բրիգադում, օղակում, ֆերմայում։ Այդ բանին կարող են օգնել ագիտատորները, գրադարանի աշխատողները, կոմերիտական ակտիվը։

Այդպիսի զրույցներն ունկնդիրներին իրազեկ են պահում ու շահագրգռում դասախոսությանը ներկայանալու, որի հետեւիանքով լեկտորի ումի դահլիճը լեփ-լեցուն կլինի։

Գրադարանի աշխատողները մասսաներին դասախոսությանը նախապատրաստելու համար կարող են ցուցափեղկեր պատրաստել և այնտեղ ցուցադրել թեմային վերաբերող գրականություն (գիրք, ամսագիր, թերթ) դիագրամներ, լուսանկարներ, սխեմաներ, պլակատներ և ցուցադրական այլ նյութեր։ Որոշ լեկտորի ումներ, երբեմն էլ առանձին դասախոսներ, գրամեքենայով կամ խմորատիպով տպագրում են մի քանի հարյուր թերթիկներ, որտեղ գրվում են դասախոսության թեման, թեմայի թեղիսները, պլանը, ստուգիչ հարցերը։ Այդ կարգի թերթիկները բաժանում են ցեխերի, բրիգադաների աշխատողներին։ Այս դեպքում դասախոսը և լեկտորի ումը շահում են երկու բան։ Նախ՝ ինֆորմացիա են տալիս առաջիկա դասախոսության մասին և ապա՝ ունկնդիրների մեջ մեծ հետաքրքրություն են ստեղծում դասախոսության նկատմամբ։

ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ԴԱՍԱԽՈՍԻՆ

Մեծ նշանակություն ունեն այն պայմանները, որոնց մեջ կարգացվում է դասախոսությունը և որոնք թե ունկնդիրների և թե դասախոսի վրա թողնում են հաճելի տպավորություն։ Կեղտոտ դահլիճը, նստելու հարմարությունների բացակայությունը բացասական տպավորություն են թողնում լսողների և դասախոսի վրա, որի հետևանքով, տուժում է դասախոսությունը։

Դասախոսության կազմակերպողները պետք է հոգ տանեն լսարանը կահավորելու մասին, որպեսզի ունկնդիրները չկանգնեն ոտքի վրա, որպեսզի դասախոսն ստիպված չլինի հաղթա-

հարելու այնպիսի դժվարություններ, որոնք կարելի էր հախօ-
րոք հարթել: Դասախոսությունից առաջ անհրաժեշտ է մտածել
լուսավորություն ունենալու մասին, որպեսզի կարդալու, գրելու,
ցուցադրելու հնարավորություն լինի դասախոսի և ունկնդիր-
ների համար:

Դահլիճում դասախոսի համար պետք է ստեղծել «Հրամա-
նատարական բարձունք»: Եթե բեմ չկա, անհրաժեշտ է ունե-
նալ ամբիոն, որպեսզի ունկնդիրները տեսնեն դասախոսին, դա-
սախոսն էլ կարողանա ամբողջ լսարանը պահել իր տեսադաշ-
տում: Կուլտուրայի տան դիրեկտորը կամ պատասխանատու մի
այլ անձնավորություն ժամանակին պետք է հայտարարի դա-
սախոսության սկսվելը, ապա մինչև վերջանալը պետք է ներկա
լինի ու ղեկավարի:

Առանձնապես մեծ դահլիճում դասախոսությունը լսելի
դարձնելու համար—նպատակահարմար է դնել ռադիո-բարձրա-
խոսներ, որոնք ուժեղացնում են ձայնը:

Դասախոսության ժամանակ ամեն մի շարժում դրավում
է ունկնդիրների ուշադրությունը, ուստի իլյուստրատիվ բոլոր
պարագաները (քարտեզ, պլակատ, նկարներ, դիագրամներ)
պետք է փակցնել դասախոսությունից առաջ, իսկ դասախոսու-
թյան ժամանակ դադարեցնել ամեն տեսակ շարժում, երթևե-
կություն:

Վերջապես, անհրաժեշտ է հողատար վերաբերմունք ցու-
ցաբերել դեպի դասախոսը, որպեսզի նա լիովին հնարավորու-
թյուն ունենա դասախոսությունը հաջողությամբ վարելու հա-
մար:

ԴԻՏՈՂԱԿԱՆ ՊԱՐԱԳԱՆԵՐ, ՅՈՒՅԱՀԱՆԴԵՍՆԵՐ

Կուլտուրայի տան, ակումբի, դրադարանի մշտական լեկ-
տորիումի պայմանները հնարավորություն են տալիս դորժադրե-
լու ուսումնա-դիտողական ամեն մի պարագա (աշխարհագրա-
կան և պատմական քարտեզներ, սխեմաներ, դիագրամներ,
դժադիր աշխատանքներ, նկարներ, կինո ապարատ, դիաֆիլմեր
և այլն):

Դպրոցի ֆիզիկայի, քիմիայի դասատուները լեկտորիում-
ում դասախոսելիս կարող են օգտագործել դպրոցի ֆիզիկայի ու
քիմիայի լաբորատորիաների հարմարությունները և ցուցադրել

Նախօրոք մտածված ու ստուգված փորձը: Կարելի է օգտագործել նաև դպրոցի աշակերտների պատրաստած ինքնաշեն գործիքները, ինչպես և լեկտորի ու ունկնդիրների պատրաստած քարտեզները, նկարները, դիագրամները և այլն: Իսկ այդ բոլորը կարելի է նախօրոք պատրաստել և ունենալ ձեռքի տակ:

ԼՍԱՐԱՆԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆԸ

Լեկտորի ու ունկնդիրների հաջողության գրավականներից մեկը լսաժանի ուսումնասիրությունն է: Կարևոր նշանակություն ունի կարգացած դասախոսության արդյունքների հաշվառումը:

Յուրաքանչյուր դասախոսությունից հետո դասախոսին տրվում է համապատասխան գնահատական, որը դեռ բավական չէ պարզելու համար դասախոսության արդյունքները: Որոշ դեպքերում գրավոր կարծիքները խաբուսիկ են լինում: Լեկտորի ու ունկնդիրների դեկավարը պետք է մտածի դասախոսության արդյունքներն ըստ էության բաղմակողմանիորեն ուսումնասիրելու մասին: Այդ նպատակով նպատակահարմար է դասախոսությունից հետո զրույց ունենալ ունկնդիրների հետ, պարզելու համար թե դասախոսության մեջ ի՞նչն ավելի շատ է հետաքրքրել նրանց, ի՞նչը բավարար չափով չի լուսաբանվել և ապա ի՞նչ ցանկություն ունեն նրանք ապագա դասախոսությունների վերաբերյալ: Երբեմն էլ անհրաժեշտ է հատուկ հարցաթերթիկով պարզել դասախոսության որակն ու թողած տպավորությունը:

Բաղմամարդ լսարանում դասախոսությունից անմիջապես հետո ունկնդիրների հետ զրույց ունենալը դժվար է: Այդպիսի խաբաններում կարելի է միայն որոշ ունկնդիրների հետ զրույցել, կամ թե դասախոսությունից առաջ խնդրել, որպեսզի դասախոսությունը վերջանալուց հետո ունկնդիրները հայտնեն իրենց ցանկությունը հետագա դասախոսությունների մասին:

Կարևոր է դասախոսության ընթացքում տրված հարցերի ուսումնասիրությունը: Դասախոսությունից հետո պետք է հավաքել տրված հարցերը, ինչպես նաև գրավոր հարցումները, և այդ արժեքավոր աղբյուրից օգտվել ապագա դասախոսությունների կազմակերպման համար:

Ցանկալի է նաև գրի առնել դասախոսության վերաբերյալ տրված բանավոր հարցերը՝ ուսումնասիրելու համար:

Բացի այդ բոլորից, հմուտ ղեկավարը—ազիտատորը միշտ հնարավորություն ունի ըստ էության պարզելու դասախոսության արդյունքները: Նա բանվորների, կոլխոզնիկների, ծառայողների մոտ լինելով, զրույցի ընթերցանության ժամանակ հնարավորություն ունի իմանալու դասախոսության վերաբերյալ ունկնդիրների կարծիքները, արձանագրելու նրանց ապագա ցանկությունները:

Այս և նմանօրինակ միջոցներով լեկտորիումի ղեկավարը, ուսումնասիրելով լսարանը, հաշվի առնելով մասսաների պահանջներն ու ցանկությունները, կազմում է հաջորդ ամսվա թեմատիկ պլանը և միջոցներ է ձեռք առնում այդ պլանն անպայմանորեն կատարելու համար, որով բարձրացնում է լեկտորիումի նշանակությունն ու հեղինակությունը:

Լեկտորիումում անհրաժեշտ է ունենալ «Հարցերի և առաջարկների արկղ», «Տպավորությունների մատյան», որտեղ հավաքվում, արձանագրվում են ունկնդիրներին հետաքրքրող հարցերը, առաջարկները, տվյալ դասախոսության թողած տպավորության մասին եղած կարծիքները:

Հատուկ ուշադրությամբ պետք է օգտագործել լեկտորիումի կազմակերպած դասախոսությունների վերաբերյալ տեղական և ռեսպուբլիկական թերթերում լույս տեսած հոդվածները՝ համապատասխան եղբակացություններ անելու համար: Այդ հոդվածները հարկավոր է հավաքել և ալբոմ պատրաստել: Վերին աստիճանի կարևոր միջոցառում է ունկնդիրների կոնֆերանս հրավիրելը, հատկապես այն ժամանակ, երբ ավարտվում են ցիկլային դասախոսությունները: Կոնֆերանսում ունկնդիրները կպատմեն տվյալ ամսում, եռամսյակում լեկտորիումում լսած դասախոսություններից ստացած իրենց տպավորությունները և նորանոր առաջարկներ կանեն հետագա դասախոսություններին մասին:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԵՎ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Լեկտորիումի աշխատանքները ճիշտ պլանավորելու համար անհրաժեշտ է լավ հիմքերի վրա դնել կատարված աշխատանքի հաշվառումը:

Յուրաքանչյուր դասախոսությունն պետք է գրանցվի ստորև բերված ձևի մատյանում:

Կարելի է հաշվառման այնպիսի մատյան պահել, որտեղ յուրաքանչյուր դասախոսի համար լինի մի քանի թերթից բաղկացած առանձին բաժին, և ըստ դասախոսների գրանցել կարգացած դասախոսությունները:

Ավելի լրիվ, ամբողջական ձևն օրագիրն է, որտեղ գրանցվում է, թե ինչպե՞ս նախապատրաստվեց, ինչպե՞ս անցավ և ի՞նչ արդյունք տվեց դասախոսությունը: Եթե դասախոսության հետևանքով արտադրության մեջ որոշակի, շոշափելի փոփոխություն, բեկում է առաջ եկել, նշանակում է դասախոսությունը հմտորեն կապակցվել է հիմնարկի, օբեկտի պրակտիկ աշխատանքի հետ, թեորիան պրակտիկայի հետ, ուրեմն դասախոսությունն նպատակասլաց է եղել: Այդ հանգամանքն օրագրում հարկավոր է ընդգծել:

Մ Ա Տ Յ Ա Ն

. լեկտորիումում կարգացած դասախոսությունների հաշվառման:

№ №	ԹԵՄԱՆ	ՀԱՐԳ ԿԱՅԻՆ	Դասախոսի ազգանունը, անունը	ՄԻՋԻՔ ԵՎ ՈՒՆԻՎԵՐՍԻՏԵՏ	ՀԱՅԿԵՆ ԵՎ ՆՈՒՆԻՎԵՐՍԻՏԵՏ	ՄԱՍԻՍ ԵՎ ՆՈՒՆԻՎԵՐՍԻՏԵՏ
--------	-------	---------------	-------------------------------	-----------------------------	-------------------------------	------------------------------


Տվյալ ամիսը վերջանալուց 2 օր հետո լեկտորիումի դեկավարն ամփոփում է կատարված աշխատանքը և կարճ ղեկուցազրի հետ վերոհիշյալ ձևով արդյունքները ներկայացնում է կուլտուրուս բաժնին, իսկ վերջինս, իր հերթին ըստ լեկտորիումների, ամփոփելով շրջանում կատարված աշխատանքը, շրջանային դասախոսական խմբակների եռամսյա հաշվետվության համար սահմանված № 1 ձևով, դասախոսական խմբակի հաշվետվության հետ միասին, եռամսյակը մեկ անգամ հաշվետվություն է ներկայացնում Կենտրոնական դասախոսական բյուրոյին, հաշվետվության մեջ առանձնապես ցույց տալով յուրաքանչյուր լեկտորիումի կազմակերպած դասախոսությունները:



Խմբագիր՝ Ս. ՍԱՀԱԿՅԱՆ
Կազմեց՝ Կ. ԱՅՎԱԶՅԱՆ
Սրբագրիչ՝ Հ. ՂԱԶԱՐՈՍՅԱՆ
Կոնտրոլ սրբագրիչ՝ Մ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՎՅ 02955: Պատ. 1193: Տիրաժ 2000: Տպագրական 1³/₄ մ.:
Հանձնված է արտագրության 24/VI—1949 թ.,
Ստորագրված է տպագրության 18/VII—1949 թ.,

Հայպոլիգրաֆհրատի վարչության № 1 տպարան, Երևան, Լենինի փ. № 65



~~211~~ E7J4.

A $\frac{\text{II}}{12460}$

12460